

քացի մը հետեւած չէի՞նք ըստ մեկնաւոր-
սեղէն առաջ այս ֆենտիսեան հրաւերն ըն-
դունելով: Կերեւայ թէ սուր կամ հրագէն
շարժելն աւելի դիւրին կուգայ իրենց: Եթէ
սակայն իշխանը վիրաւորուի կամ մեռնի
իսկ այս մեկնաւորսին մէջ, իր ֆենտիսեա-
նիսները ֆենտիսեաւորսին ընդդէմ չեն դադ-
րիր. ընդհակառակն աւելի համարու ու կա-
րեւորութիւն կը ստանան: Այն ասե՞ն

Խեղճ Հանրի իշխան: Ինչեւ յըսին ի-
րեն համար, միևնոյն իսկ գրեցին թէ ոսֆ
կոխած սեղը մահաւորութիւն կը պատճառէ.
զինքն ճիւղաբիւր Բոն-Սալիս քերող շոգենա-
ւին մէջ մտադ մը մեռեր է, ուրիշ մը ծովն
իկնել է, ուրիշ մը անձնասպան եղեր է.
հապա Մենելիֆի արմուկի՞ք. քաղաքին հի-
ւընդցեր է. երովսական զօրագումար մը յադ-
քուեր է դրացի ցեղէ մը. դեռ ո՞ր մէկը: Այս
հաշիւով, հրաշք պիտի ըստէք Մեհաժըրի
երեկոյան շոգենաւոր անվսանգ Մարսիլիս
հասնի:

Այս քոյր հակառակութիւններուն ու
իրարանցումներուն մէջսեղ, իշխանը գրա-
ցած է արդեօք իսկապարհաւան ասպարէզին
մէջ նախապետ մը ըսած ընդհանր, որուն
կը պարտի զանոնք: Չարամիսներ կան որոնք
կըսեն թէ ինքն իրենք ունենալ կը նկատէ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ պահպանողական կուսակցու-
թեան ամենէն կարեւոր թերթը, Սթանստը,
որ Սոլզբերիի նախարարութեան մեծ ներդրե-
ն է, միշտ յստակօրէն կը լուսաբանէ արեւելեան
խնդիրը: Սթանստը Կ. Պոլսոյ թղթակցու-
թիւնները որոնք շատ զաղտնիքներ երեւան
կը հանեն, տարօրինակ կերպով ուշադրաւ են
թէ՛ իրենց ճշգրտութեան և թէ՛ իրենց լրջու-
թեանը պատճառաւ:

Պահպանողական մեծ թերթը յուլիս 28
չորեքշաբթի թիւին մէջ հրատարակեց Կ. Պոլ-
սէն օրուան խնդիրներուն վրայ թղթակցու-
թիւն մը որուն գլուխը դրած է հայկական
խնդրին վերաբերեալ կենսական կարեւորու-
թիւն ունեցող տեղեկութիւն մը զոր նոյնու-
թեամբ առաջ կը բերենք:

«Այստեղ հասան Լոնտոնի յուլիս 20ի
թերթերը որոնք կը պարունակեն Արեւելեան
հարցին վրայ երեսփոխանական ժողովին մէջ
կատարուած վիճաբանութիւնները: Թէ՛ հա-
տարակութեան համար և թէ՛ քաղաքականու-
թեամբ զբաղողներուն համար օգտաւէտ է
գիտնալ թէ ի՞նչ է այստեղ տիրապետող մի-
ահամուռ կարծիքը, որքան որ ես կըրցած եմ
տեղեկանալ: Այդ կարծիքն այն է թէ հայ-
կական խնդիրը վերաբարձեալ համար հիմայ
ըլլալիք ո՞ր և է փորձի անմիջական հետեւանքը
պիտի ըլլայ նոր և ամենածանր ջարդեր ամ-
բողջ կայսրութեան մէջ:

«Ամենամեծ ծառայութիւնը զոր Հայաս-
տանի բարեկամները կրնան մատուցանել այն
ժողովուրդին որուն բարեկեցութեանը և ա-
պահովութեանը կը շահագորդուին, առ այժմ
ուրիշ բան չի կրնար ըլլալ՝ բայց եթէ զգու-
շաւոր լուծիւն մը: Իրենց կողմէն ո՞ր և է
յուզում ամենաազնետալի հետեւանքներ պի-
տի բերէ »:

Հայ ազգին ճակատագրին վրայ ազդող-
ներուն մասնաւոր ուշադրութեանը կը յանձ-
նարարենք այս տեղեկութիւնները: Յոյները
ականջ չի կախեցին Սթանստըի, Թայմզի
պէս թերթերուն և արմատական օրագիրնե-
րուն մտիկ ըրին. տեսանք թէ գլխունուն ի՞նչ
փորձանք եկաւ:

ԳՐԶԻ ՔՍԱՆԱՃՈՅԲ

ՕՍԻՐԻՍ ԱՌԻՍՏԵՍ

Որքա՞ն ապուշ են եւրոպայի, ի՞նչ կապուե-
լիք խենդեր են ամերիկացիները:

Եւ հաւատա՛, Ռամսէս, թէ քաղաքագիտական
ո և է նկատուած չէ որ այս թիւում ամերիկացիները
կուտամ այդ երկու հակոտնեայ ժողովուրդներուն:

Ա՛ռ, կարգա՛ անոնց թերթերը, հանգէտները ու
գրքերը և պիտի տեսնես թէ տարիներով և տարի-
ներով կաշխատին անոնք, նոր գիւտ մը, նոր մեքե-
նայ մը հնարելու և այս բանին համար ահագին ժա-
մանակ կը կորսնցնեն, անսահման ուսումնասիրու-
թիւններու մէջ կը թաղուին. ուղեղին կը պայթե-
ցունեն, աչքերնուն լոյսը չեն գլանար, կը մոռնան
ընտանիք, զուարճութիւն և հանգիստ ու շատ ան-
գամ ալ կեանքերնին վրայ կուտան առանց յաջո-
ղելու:

Եւ նպատակնի՞ն. ստակ չահիլ, անուն հանել և
մարդկութեան օգտակար ըլլալ:

Եանքի մը բաժնի տարիէ ի վեր կաշխատի հա-
ւասարմաշափը գտնելու:

Հաւատարմաշափը գործիք մ'է, ջերմաշափին
պէս, զոր ամուսինները իրենց ննջասենեակը կը կա-
խեն երեկոյեան գիտնալու համար թէ որուն մէջ
իրենց կինը մինչեւ բանի՛ ստորիման հաւատարիմ
գտնուած... չէ իրենց:

Ուրիշ մը մեքենայ մը շինելու վրայ է որովոր-
ւան միտն հեռուէն Մարտէլ Բրէվոյի կես-կոյսերը...
բաւորող պիտի վերածուին:

Ֆրանսացի մը՝ կը փնտռէ այնպիսի ճանաչ մը
որով կարելի ըլլայ մէկու մը հիւսիսային Բեւեռը եր-
թայ տառնց պոլիտեաներէն դուրս ելլելու:

Պէճիքայի մը բաժնի տարի շարունակ աշխատե-
լու վրայ է արհեստական խաղաք պատրաստելու:

Հոլանտայի մը վերջերս գտած է բազմաթիւ
թիւն մը որուն վրայ այսուհետեւ պիտի տպուին
կոտորակները: Այդ նորաստեղծ կոտորակները անգամ
մը կարողացունեն ետքը գաւաթ մը ջուրի մէջ կը
նետուին և այդպէսով կուենա՞ր գաւաթ մը Այ-
վալքի մատրիքա(1):

Եւ այսպէս ուրիշ խել մը գիտեր փնտռողներ
կան աշխարհիս ամեն կողմը, իրենց փափագը ըլ-
լալով շատ ստակ չահիլ և մեծ անուն մը հանել:

Անգամ մը եւս, ապուշները:

* *

Եւ ինչո՞ւ հոս գաղթող շատ մը հայերուն ընտ-
րած միջոցը չեն ընդունիր. միջոցներու ամենէն
գործնականը, ամենէն անխուսափելին:

Դո՛ւն ալ բրէ, Ռամսէ՛ս:

Մականունդ թիւիստէ, վերջի եանք Ե՛մ ըրէ:
Ընդունիր չի տեսար:

Ենթադրէ որ Պուշքաբեան անունով մէկը Դո-
հիլի կամ Ալեքսանդրիայի մէջ նորաձեւութեանց
խանութ մը պիտի բանայ: Երկրորդ օրը կրպակին
վրայ խոշոր գրերով պիտի տեսնես Outchak:

Անոյնանները կըլան՝ Անոյն, Հէրմիտները՝
Հէրմ, Սարդեանները՝ Սարի և Գէտնեանները
Keder:

Չէ՞ս խնդար:

Ինչո՞ւ այդ կրճատումը, ինչո՞ւ այս ղեկակա-
թիւնը:

Գիշերը եանով կը պտուկին և առուն առանց
եանի կարթննան:

Ո՛վ է ըսեր թէ հայ անուններու վերջաւորու-
թիւնը վրաս կը բերէ արհեստաւորին, սեզանաւորին,
գրագէտին և վաճառականին:

(1) Խմբագրութիւնս մեծաւանակ commande
սուած է այդ ապրանքէն... վստահ իր կարգացողնե-
րուն ընթերցասիրութեանը վրայ:

Եւրոպայի հրապարակին վրայ ամենէն շատ
վարկ ունեցող հոյ սեզանաւորները «Եան»ով վեր-
ջացուցերը եղած են:

Կռկակար մը, օրինակի համար, անունին ծայրը
եան մը չի գտնուերուն համար չէ որ բաւազայն սխա-
լիններ կրնայ պատրաստել:

Երեւակայէ որ հայեր գտնուեցան որ Մուսթիլն
Էդուլքի տեղափոխուելուն, եաներին ճամբան կո-
րուին:

Դո՛ւն ալ, Ռամսէ՛ս, շատ ստակ վտասիլ կո-
ղէ՛ս, եանդ վերջուր և եան եկուր:

Յաջողութիւնը ոտքովը բեզի պիտի գայ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Լորա Սողապէրի կը պնդէ եղեր Դրան
մօտ, որպէս զի Էսէ՛մ փաշա ետ կանչուի
Թեապիսէն:

—Բարիդի սեղանաւորական շրջանակնե-
րուն մէջ շրջած զրոյցի մը նայելով, անգլեւ-
ֆրանսական մասնախումբ մը կազմուելու վրայ
է, մէկ անգամէն ու անմիջական կերպով վը-
ճարելու համար Բուխարստանի պատերազմա-
կան սուգանքը: Այդ մասնախումբին նախա-
գահութիւնը պիտի ստանձնէ Պ. Ալէքսօֆ:

Միւս կողմէ, Աթէնքի թերթերը կը հա-
ղորդեն թէ հելլէն կառավարութիւնը մտա-
դիւր է ներքին փոխառութիւն մը կնքել թէ՛
Բուխարստանի մէջ և թէ օտար երկիրներու յոյն
գաղթականութիւններէն, պատերազմական
սուգանքին առաջին մասնավճարը կարենալ
հատուցանելու համար:

—Թայմզին Աթէնքի թղթակիցը կը հաղոր-
դէ թէ այս միջոցիս 8000 Թեապիսացի գաղ-
թականներ կան ի Քալսիս, որոնցմէ 6450ը
ապրուստի ո՞ր և է միջոցէ զուրկ են և հա՞ն-
րային նպաստով կապրին: Ասոնցմէ շատեր
Լարիսայէն ու Թուրնալօնէն եկած են, անա-
պարանքով փախչելով թուրքերուն առջեւէն,
առանց կարենալու իրենց ինքեքերէն բան մը
առնել հետեւին: Այդ տարաբաղդներուն
մեծագոյն մասին բնակութեան յատկացուած
են քանի մը տարի առաջ շինուած զինուորա-
կան տաղաւարներ:

Սքիաթոս կղզիին մէջ 5000 գաղթական
կայ. զինադադարէն ի վեր թէեւ անոնցմէ
շատեր իրենց ծննդավայրը դարձան ի Վօլօ
և շրջակաները, սակայն մէկ մասը նորէն կու-
գան թուրքերու հալածանքներուն չի դիմա-
նալով: Ասոնք սովորաբար կամբաստանեն եղեր
վերագարձող յոյն գաղթականները թէ Էթնի-
ֆի էթէրիս յեղափոխական ընկերութեան կը
պատկանին ու այս պատրուակաւ կը բան-
տարկեն ու դրամ՝ կը պահանջեն:

—Ի. Պոլսէն յուլիս 30 թուականով կը
հեռագրեն Սթանստըին. «Կառավարութիւնը
500 ոսկի վարձատրութիւն տալ կը խոստա-
նայ այն անձին որ իրեն յանձնէ մէկը որ վեր-
ջերա Պոլիս եկած է Բարիդէն ուր գացած էր
պայթուցիկ նիւթերու պատրաստութիւնը սոր-
վիլ »:

Նոյն թերթին Հաննայի թղթակցին տե-
ղեկութեանց նայելով, ձէվատ փաշա 120,000
ֆրանքի գումար մը տարեր է իր հետ՝ թուրք
զինուորներուն յետեւալ երկու ամսականները
վճարելու համար անմիջապէս: ձէվատ փաշա
միանգամայն հրամայեր է որ կղզիին զինուո-
րական հինանդանոյին շինութիւնը, որ եր-
կար տունէն ի վեր կիսատ կը մնար, վերըս-
կըսուի:

—Յուրիս 29ին ծովականները պաշտօնապէս խնայողցին Կրէտէի տեղական իշխանութեանց թէ հրաման տուած են միջազգային զօրագուններուն՝ զէնքի դիմել եթէ որ և է յարձակում ըլլայ իրենց դէմ։ Ճէշտ փաշա զգալով որ ինք անուղղակի կերպով պատասխանատու է իր ժամանումէն ի վեր իսլամներուն մէջ տիրող զրգուման, խիստ հրամաններ ուղղեց օսմ. զօրքերուն և ձերբակալութիւններ ու քննութիւններ կատարել տուաւ։

Ճէշտ փաշայի այցելութիւնն ընդունելու առթիւ, ծովականները խօսք բացին անոր Կրէտէ զրկուելուն վրայ։ Ճէշտ փաշա յայտարարեց թէ ինք՝ իբրեւ նախկին կառավարիչ՝ ընտրուած էր կղզիին իսլամներուն վիճակը բարւոյնելու և իր կրօնակիցներն իրենց հողերուն վրայ վերահաստատելու համար, ապահովելով զանոնք որ ապագան միմին կը տեսնեն ինքնօրինութեան յապաղման պատճառաւ։ Գանէվարօ ծովակալը պատասխանեց թէ այս տեսակ պաշտօն մը շատ կը նմանի կառավարչի պաշտօնին։ Տէրութիւնը կը փափագէր փութացնել ինքնօրինութիւնը և ծովականները ձեռքերնուն եկածը կընեն կղզին խաղաղեցնելու համար։

—Բարիզէն կը հաղորդեն թէ օսմ. դեսպանատան խնդրանքը՝ «ժէն-ժիւրքի» կուսակցութեան օսկան Մէշլէրէք լրագրին դէմ բացուած դատը դադրել է՝ Պրանսայի դատական նախարարութեան որոշմամբ։ Կերեւայ թէ Դրան այս անակնկալ որոշման շարժառիթն է Մէշլէրէքի փաստաբան Պ. Միւրըանի Բարիզի պատժական ատենին առջեւ արտասանելիք պաշտպանողականը, որուն ոգին իմացուել է։ Մեծանուն փաստաբանը, ֆրանսասական վերջին «Դեյլին Տետրակ»էն փաստեր քաղելով պիտի ապացուցանէ եղբ. թէ հանրապետական կառավարութիւնը ուղղակի կերպով շատ աւելի վիրավորիչ բաներ ըսած էր այդ Տետրակին մէջ Սալթանին նկատմամբ, Հայաստանի և Կ. Պոլսոյ ջարդերուն առթիւ, քան Մէշլէրէքի խմբագրութիւնը իր թերթին միջոցաւ։

—Եւրոպական քանի մը թերթեր կը հաղորդեն թէ Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Սըր Ֆիլիք Քըրրի հաշտութեան կնքումէն անմիջապէս ետք ուրիշ անգլ. պիտի փոխադրուի և իրեն պիտի յաջորդէ Վիլհէլմայի դեսպան Սըր Հորաս Բըմպօլս։

Պրանսական դեսպան Պ. Գանպօն որ Բարիզ գացած էր ուր քանիցս տեսակցութիւններ ունեցաւ արտաքին գործոց նախարար Պ. Հանթօլայի հետ, Կ. Պոլիս վերադարձեր է։

* * *

Մինչեւ երէկ գիշեր հասած հեռագիրները ուշագրաւ բան մը չեն ծանուցաներ դեսպանախորհուրդին որոշմանց մասին։ Հասարակ խօսքին նայելով, Դուռը հիմակ որամագիր է եղեր բանակցութիւնները փութացնելու, դրամական նեղութեան մէջ գտնուելուն պատճառաւ։

Գալով Կրետէի, օսմ. եօթը մարտանաւերուն կղզիին մօտենալը խնդրոյ առարկայ է միշտ։ Ռիւթէր կը հեռագրէ Հաննայէն թէ

ծովականները պիտի ընդգրկմանան՝ եթէ օսմ. նաւախումբը փոխէ Կրետէի ջուրերը մտնել։ Կառավարիչը Դրան մէկ ծանուցագիրը յանձնել է ծովականներուն, յայտարարող թէ նաւատորմը Կրետէ չի պիտի գայ։ Իսկ Պոլսոյ թուրք թերթերուն մէջ հրատարակուել է թէ նաւախումբը Արշակաղագոս կերթայ մարզանքներ կատարելու։

Այս առաւուսն հեռագիրներ։

Աթէնք, 6 օգոստոս. — Թագաւորը այցելութիւն տալով օսմական դեսպան Պ. Օնտին, երկար տեսակցութիւն մը ունեցաւ։

Կը հաւատեն թէ հաշտութեան պայմանագրին մէկ յօդուածը կը տրամադրէ որ տէրութեանց երեք պատարիակներ տանձնեն պատերազմական տուգանքին յատկացուած երեւոյթի բոնորոյցը։

Լոնտոն, 6 օգոստոս. — Խորհրդարանի փախման առթիւ կարգադրուած գահաձառող յոյս կը յայտնէ թէ թուրքի հէշլէրէքի հաշտութեան բոլոր զլխաւոր կէտերը պիտի կարգադրուին. ասկեց զատ, նոր բան մը չիմացուներ։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի օրը կառավարական պաշտօնատանները գոյ էին Մահմայի կամ «նուրական կապերու» տօնին պատճառաւ որ նոյն առաւօտուն կատարուեցաւ հանդիսաւորապէս, Մուհամմէտ Ալի հրապարակին վրայ։ Այս կրօնային արարողութեան կը նախապահէր նախարարապետ Մուսթաֆա փաշա Ֆէհմի ի դիմաց Բարձր. Խորթին։ Ներկայ էին նաեւ միւս բոլոր նախարարները։

—Օսլէանի Հանրի իշխանը և Պ. Լէոնթիէֆ երեկ մեկնեցան Ալեքսանդրիայէն, Մէսսաթըրի Էֆուաթէօն շրջանաւ։ Թէեւ Պ. Լէոնթիէֆ Պոլսոյ ճամբով Օսմաս պիտի ուղեւորէր, սակայն վերջին պահուն փոխեց իւր որոշումը և իշխանին ընկերացաւ ի Մարսիլիա՝ անոր վիճակին մէկն ըլլալու համար Ալպերթօնէ զօրափախի հետ ունենալիք մեծ նամարտին մէջ։

—Էմիլքըն Կագեթի մէջ կը կարգանք։

«Ն. Բ. Երէն» Ահմէտ Մէյքէտտին պէյ կոչնագիր ստացել է յաւաքիկայ շարաթ (այսօր) Ալեքսանդրիոյ տեղական դատարանին ներկայանալու, Սըրթիկի-Քըրպի մօտ ստիկանի մը վրայ ձեռք վերցուցած ըլլալուն համար։

—Լոնտոնի թերթերուն կողմէ զրկուած թղթակիցները որոնք Սուտանի բանակին զինւորական գործողութեանց պիտի հետեւին, Գահիրէ հասած են և ժամէ ի ժամ աւրտօնութեան կը սպասեն, դէպի սահմանազուլ մեկնելու համար։ Այդ թղթակիցներ առայժմ հինգ են։ Թալլիկի, Տէյլի Նիւսի, Տէյլի Մէյլի, Կուալիֆի և Ռիւթէրի գործակալութեան։ Այս վերջինը, անցեալ տարուան պէս հեռագրական մասնաւոր լրատուութիւն մը պիտի հաստատէ Եգիպտոսի թերթերուն համար։

—Բոսորէ կիմանայ թէ Պէրութէն առնուած հեռագրի մը նայելով, տեղւոյն իսլամ ժողովուրդը իշխանութեանց դէմ ելեր է, բէտիֆներու բռնի զինուորագրութեանը առթիւ։ Կըսուի թէ Հօրանի ախրդիներուն մէջ ալ խռովութիւն ծագել է։

—Բաւարակի մշտութեան նկատմամբ Եգիպտոս

սի գաւառներէն հասած յարերը զոհոյցուցիչ են։ Ամեն կողմ կը հաստատուի թէ այս տարուան արտադրութիւնը նախորդ տարիներէն շատ աւելի պիտի ըլլայ։

—Յուլիս 16էն 22 Գահիրէի մէջ 384 ծնունդ պատահած է (192 մահ և 192 աղջիկ) և 499 մահ։ Ալեքսանդրիոյ մէջ 193 ծնունդ և 249 մահ։

—Արաբներէն թերթի մը անգլիականացի նայելով, Ալեքսանդրիոյ մէջ 20,000 հօգի կայ որոնք հաշիւ կը գործածեն. իսկ ամբողջ Եգիպտոսի մէջ, մէկ միլիոնի կը հասնի անոնց թիւը։

ՏԱՐՊԷԼ-ԱՀՄԱՐ ՓՈՂՈՑԻՆ ՈՃԻՐԸ

Մինչեւ այսօր Եգիպտական տոմարիանութիւնը եօթը հօգի ձերբակալած է — երկու կին և հինգ Երիկմարդ — Տարպէլ-Ահմար փողոցի օճրագործութեան առթիւ որուն զօհն է, ինչպէս կը յիշուի, ֆրանսական հպատակ Ալեքսիսի մը։ Այս մարդ բանի մը շարաթէ հետ Գահիրէ հասած էր և կը բնակէր յիշեալ փողոցը կաշաւորուած սենեակներ պարունակող տուն մը որուն տիրուէին Էր խոպալ կան հպատակ Ալեքսիսի կին մը։ Քանի մը հազար նորթիներ տրամադրութեամբ դրամ և զոհարեղէն բերած էր իր հետ։ Երկուշաբթի առաւօտ իր գիտիլը գտնուեցաւ մահճակալին տակէն. բժիշկներն հաստատեցին թէ խեղդուած ու հոն նետուած էր երկու օրէ ի վեր։

Առաջին ձերբակալուողներն եղած են տանտիրուհին ու իր տարիածուն որոնց վրայ կասկածներ կը ծանրանան։ Ասոնք, հարցաքննութեան միջոցին, տեղացիի մը անունը տուած են տեղւոյնեցի թէ օճրին երեւան ելլելէն բանի մը օր առաջ ալեքսիսի ցիլին հետ կը նշմարէին գայն։ Բայց այս վիպաթութեամբ չեն կրցած օճիքին տպաւորել։

Տանտիրուհին մեղադարտութեանը նկատմամբ կեցած զլխաւոր տպացոյցներն մէկը սա է որ, իր խոցէն գտնուած են մեծաքանակ ֆրանսական ոսկիներ, և ալեքսիսի ունեցած դրամն ալ ֆրանսական ոսկի էր որով կը կատարէր իր բոլոր գնումները։

Ֆրանսական և իտալական հիւպատոսները մօտէն կը հետեւին հարցաքննութեանց որոնք որոշ արգիւնք մը չեն տուած տոմարին։

Պ. Սթէֆանօ Բօֆանտի կը ծանուցանէ թէ իր 1898ի Էնֆիգաթօր Էմիլքընը յառաջիկայ Նոյեմբերին հրապարակ պիտի ելլէ։

Այս օգտակար հատորը որ Եգիպտոսի վարչական և վաճառականական դատերուն պատկանող ամեն անձնաւորութիւններու անունները և հասցէները կը պարունակէ, ամեն գործի մարդերու և վաճառականներու գրասենյակին վրայ գտնուելու արժանի հրատարակութիւն մ'է։

Ծանուցումներու, բաժանորդագրութեան և զիտողութեանց համար գրել ուղղակի հրատարակչին յ'Ալեքսանդրիա։

ԵԿՈՂ ԶԱԲԹՈՒԱՆ ՀԵՈԱԳԻՐՆԵՐԸ

«ՅԱՆԹԵՁԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ»

Կ. Պոլիս, 8 Օգոստոս. — Եօթը մարտանաւէ բողբոջած նաւախումբը որ անցեալ շարաթ ճամբայ ելաւ կրէտէ երթալու համար, այս առաւօտ Գուաֆարուի առջեւ հասաւ։

Փարիզ, 8 Օգոստոս. — Դեսպանները այս իրիկուն պիտի կնքեն հաշտութեան պայմանները։

Լոնտոն, 9 Օգոստոս. — Դեսպանները իրենց տեսլութիւններէն հրահանգներ ստացան հաշտութեան պայմաններուն վրայ բանակցելու համար։

Կ. Պոլիս, 9 Օգոստոս. — Թէվֆիք փաշա Կիօր Սուլի հայկերոյթի մը գայած ըլլալուն, Թօրհանէի մէջ նիստ չեղաւ։ Վաղը անպատճառ հաշտութեան պայմանները պիտի ստորագրուին։

Փարիզ, 9 Օգոստոս. — Տէրութիւնները որոշեցին ճշմոտ փաշան կղզիէն դուրս հանել։

Լոնտոն, 9 Օգոստոս. — Հիւպատոսները քառօրյա պաշտօնական այցելութիւն տուին ճէվառ փաշայի։ Փարիզ, 10 Օգոստոս. — Սուլթանը զիջումները

րած ըլլալուն, հաշտութեան գործը զիրարացած է:
4. Պոլիս, 10 օգոստոս. — Թէվֆիք փաշայ յայտարարեց թէ մինչեւ որ 4 միլիոն ոսկին փեթին չի տրուի, բանակցութեան չի կրնար մտնել:

Դեսպանները հռահմաններու կ'ապաստեն:
Փարիզ, 11 օգոստոս. — Եօթը մարտունակները Հանեան ուժակոծեցին:

Կրեթ, 11 օգոստոս. — Դեսպանները որոշեցին հաշտութեան պայմանները կնքելու համար բանակցիլ Թէվֆիք փաշայի հետ:

4. Պոլիս, 11 օգոստոս. — Եօթը մարտունակները հրաման ստացան Այ-Սթէֆանոյէն ետ դառնալու:

Փարիզ, 12 օգոստոս. — Դեսպանները հաշտութեան պայմանները կնքեցին ընկալելու, բայց փաշան որդէն պիտի սկսին:

4. Պոլիս, 12 օգոստոս. — Թուրքիա իր ելծուական բեքսթիքը աւելցունելու համար Պահէէ Գալիսի ստարաֆներէն 1200 ոսկիի փոխառութիւն մը կնքեց:

Լոնսոն, 12 օգոստոս. — Պ. Բրըքըն յայտարարեց թէ Յունաստան այլ եւս չի կրնար գիծանայ այս վիճակին մէջ և պէտք է որ պատերազմական տագմանքը անսկիւնապէս վճարէ:

Կրեթ, 13 օգոստոս. — 350 անգլիայի զինուորներ սպաննուեցան թուրքերու կողմէ:

Լոնսոն, 13 օգոստոս. — Անգլիայի ծովակալը ճաշ մը տուաւ ի պատիւ ճէփա փաշայի:

Լոնսոն, 14 օգոստոս. — Լորտ Սալզբորի յայտարարեց թէ տեղեկութիւն չունի թուրքիոյ և Յունաստանի մէջ անցած դարձածէն:

4. Պոլիս, 14 օգոստոս. — Դեսպանները որոշեցին բանակցիլ Թէվֆիք փաշայի հետ հաշտութեան պայմաններուն վրայ:

Փարիզ, 15 օգոստոս. — Սուլթանը ծանայց թէ 4 միլիոն ոսկիի տեղ 6 միլիոնը աւելի աղէկ է:

Լոնսոն, 15 օգոստոս. — Սուրէ ալի Լուրը թէ թրքական մարտունակները Հանեան ուժակոծեցին: Այդ նաւերը Թիւսիսանէի առջեւ խարսխած կը մնան:

4. Պոլիս, 15 օգոստոս. — 15,000 զինուոր զըրկուեցաւ Թեսալիա:

Փարիզ, 16 օգոստոս. — Հաշտութիւնը կնքուելու վրայ է, մաս մը մնաց:

4. Պոլիս, 16 օգոստոս. — Դեսպանները այսօր Եւրոպա ուղեւորեցան արձակուրդով:

4. Պոլիս, 17 օգոստոս. — Դեսպանները այսօր Նիստ ըրին և որոշեցին վաղը ալ ընել:

ԹԱՏԱՄԵԼ

Ա Ձ Դ

Ուսուցչուհի մը որ Պոլսոյ կարեւոր քաղի մը բարձրագոյն վարժարաններէն միոյն մէջ պաշտօն վարած է եւ երկու ամսէ ի վեր քաղաքս կը գտնուի, կը փափաքի հայերէնի դասեր տալ տուներու մէջ այցելութեամբ:

Այն ծնողք որ իրենց զաւակներն օտար վարժարան կը դնեն եւ որ մայրենի լեզուն անոնց ուսուցանել տալ կուզեն, առիթն կրնան օգտուիլ:

Դիմել փԱՐՈՍԻ Խմբագրատունը:

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքսի, մորթի եւ շղպին հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն զինող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիրէ Զօրիի հիւրը դիմել. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կես օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբասք ձրի կը դարմանուին:

ԲԻԻՉԱՆԴ ՓԱՓԱՉԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Պաղար Մուրուրի մէջ խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ և ծեծուած խաչկէ պիտի ծախուի սովորական գներով:

Այս խանութին մէջ կան նաեւ զովանցուցիչ ըմպելիներ:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Իրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ
ԱԼԵՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՄԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու. — Կանխավճար արժեթուղթերու վրայ. — Կտան. ձեռք յաճախորդներու հաշտին համար դան. ձուլներ ընել Եգիպտոսի և արտասահմանի գիրաւոր քաղաքներու մէջ. — Պայմանաժամանակը վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պոլսոյ փողոց Եգիպտական հեռագրատան դէմ Բէսմաչօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱՁԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէքիէ, Պիւլպիւլեանի օթէլին քովը. — Կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն զգուշացման հետ զոհայններու եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական գներով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.
Գաւհիւրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —	—
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	—
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 41	—	1 54	—
Տաւանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51	—
Աղէ բաւարիւր	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50	—

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.
Աղէ բաւարիւր	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —	—
Տաւանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9	—
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	—
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	—
Գաւհիւրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆԶԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆԻ		ԱՌԱՅՈՏ		ԵՐԵԿՈՅ		ԿԱՅԱՐԱՆԻ		ԱՌԱՅՈՏ		ԵՐԵԿՈՅ	
Գաւհիւրէ	մեկ.	11 40	—	7 —	—	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	ժամ.	12 28	—	7 48	—	» կայարան	»	—	—	3 30	—
	մեկ.	12 33	—	7 53	—	» կայարան	»	—	—	7 5	—
Ջակարիկ	ժամ.	1 34	—	8 54	—	» կայարան	»	—	—	8 53	—
	մեկ.	1 44	—	9 4	—	» կայարան	»	—	—	9 3	—
Խաւիլիւր	մեկ.	3 40	—	1 —	—	» կայարան	»	—	—	9 47	—
Սիւէզ կայարան	ժամ.	—	—	5 —	—	» կայարան	»	—	—	9 4	—
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	—	—	» կայարան	»	—	—	10 35	—